«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «
Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» **2021 թվականի մայիսի 5-ի** ՀՕ-194-Ն **օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:**

Հոդված 2. Օրենքի **3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12.1-ին կետով՝ «**12.1) անկախ կյանքի կենտրոն՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն, որը մատուցում է անկախ կյանքի ծառայություններ,»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «և տարեկան ծրագրերին» բառերը փոխարինել «ծրագրին» բառով:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

- **բ. ենթակետն ուժը կորցրած ճանաչել,**
- **ե. ենթակետն ուժը կորցրած ճանաչել,**
- **գ. ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «գ.** հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված ծառայություններ տրամադրելու կարգերը՝ ըստ անհրաժեշտության,**»:**

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝

- 2-րդ կետում «և տարեկան ծրագրերի նախագծերը և դրանք» բառերը փոխարինել «ծրագրի նախագիծը և» բառերով,
- 5-րդ կետում հանել «ցուցումների» բառը և «ուղեցույցներ» բառից հետո լրացնել «՝ ըստ անհրաժեշտության» բառերը.

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել։

Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել։

Հոդված 8. Օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ մասում «և տարեկան ծրագրերի» բառերը փոխարինել «ծրագրի» բառերով։

Հոդված 9. Օրենքի 17-րդ հոդվածի՝

- 2-րդ մասում «և տարեկան ծրագրերով» բառերը փոխարինել «ծրագրով» բառով։
- 4-րդ մասում «սույն օրենքն ուժի մեջ է մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում,» բառերը փոխարինել «փուլային կարգով» բառերով։
- 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝ «Վերակառուցման ժամանակացույցը և պայմանները հաստատում է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտի պետական լիազոր մարմինը՝ քաղաքաշինության բնագավառի պետական լիազոր մարմնի հետ համատեղ։»։

Հոդված 10. Օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ, 6-րդ կետերում և 7-րդ մասում «և տարեկան ծրագրերով» բառերը փոխարինել «ծրագրով» բառով։

Հոդված 11. Օրենքի 21-րդ հոդվածի 3.1-ին մասում հանել «ստեղծման և» բառերը։

Հոդված 12. Օրենքի 21-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.2-րդ մասով՝ «3.2. Անկախ կյանքի ծառայությունները, բացի անկախ կյանքի կենտրոնից, կարող են մատուցվել նաև «Սոցիալական աջակցության մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հավաստագրված կազմակերպությունների կողմից՝ պատվիրակման միջոցով։»։

Հոդված 13. Օրենքի 23-րդ հոդվածի 3.1-ին մասում «փետրվարի 1-ը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի» բառերը։

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 4-րդ հոդվածի 1-ին մասի, որն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից։

Հոդված 15. Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում նշված ժամանակացույցը և պայմանները հաստատելու մասին հրամանի նախագիծն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում։

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) **2-րդ հոդվածի 2-րդ մասում «ժամանակահատվածում» բառից հետո լրացնել** «, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով» **բառերը:**

Հոդված 2. Օրենքի **2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մասով՝** « 4. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի շրջանակներում հաշմանդամության գնահատման առանձնահատկությունները սահմանում է կառավարությունը։**»:**

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել։

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝

- 2-րդ կետում «որոշման» բառից հետո լրացնել «(վարչական ակտի)» բառերը, իսկ «ձևը» բառից հետո լրացնել «(ձևերը)» բառը,
- 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,
- 1-ին կետից հանել «և սպասարկման» բառերը,
- 7-րդ կետում «անձի ֆունկցիոնալությունը գնահատող» բառերը փոխարինել «անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացում ներգրավված» բառերով։

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասում «միջոցով,» բառից հետո լրացնել «՝ էլեկտրոնային գործ հարուցելու հիման վրա» բառերը։

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում վերջին «վրա» բառից հետո լրացնել «, իսկ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ մինչև սույն օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ անձի հաշմանդամության գնահատման առանձնահատկությունների սահմանումը» բառերը։

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հոդված 7. Օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասում նշված առանձնահատկությունները սահմանելու մասին Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում։

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի ՀՕ 185 հողային օրենսգրքի՝

- 64-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «զոհված և հաշմանդամ դարձած» բառերը փոխարինել «զոհված կամ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված» բառերով,
- 66-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13-րդ կետով.

«13) հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության նորմերի ապահովման նպատակով շինությունների կառուցման և վերակառուցման համար։»,

- 68-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին «կայքէջում» բառից հետո լրացնել «նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի եղանակով,» բառերը։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։